13.12.23 - 13.12.23
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ 6-րդ մասնաշենքի ընթերցասրահ

Ս.թ. դեկտեմբերի 13-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի ընթերցասրահում կանցկացվի դասախոսություն՝ «Հորդանանի նորահայտ հայերեն արձանագրությունները» խորագրով:

Ս.թ. նոյեմբերի 23-30-ը ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը աշխատանքային այցով եղել է Հորդանանում և մասնակցել է Շոուբակի արշավախմբի հնագիտական հետազոտություններին: Գործուղման շրջանակում Համլետ Պետրոսյանը ծանոթացել է 12-րդ դարի եկեղեցու բակում գտնված հայերեն արձանագրություններին, ուսումնասիրել է հայտնաբերման հանգամանքները, լուսանկարել և նկարագրել պեղումների այդ հատվածը:

Դասախոսության ժամանակ կներկայացվեն վերոնշյալ գործուղման ընթացքում կատարված հետազոտությունների արդյունքները:

Դասախոսությանը ներկա կլինեն ԵՊՀ պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ և թեմայով հետաքրքրվողներ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am